

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 61-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24. շաբաթ.

Ըստ Մայր Աթոռի եկեղեցական օրացույցի, այսօր «Յիշատակ է բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի»:

Ապրիլյան եղեռնի 61-րդ տարելիցն է:

Այս տարի էլ ապրիլի 24-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռում, հայրենիքում, ինչպես նաև ողջ ափյուռքում համայն հայությունը նշեց հայ տառապանքի և մեր հավաքական նահատակության 61-րդ տարելիցը՝ երկյուղած բարեպաշտությամբ և հպարտորեն իր գլուխը խոնարհեց մեր նահատակների անմոռաց հիշատակի առաջ, նահատակներ, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց»:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Ապրիլյան իր նահատակներին:

Անցան 61 տարիներ... Վիշտը փոխակերպվեց ուժի, կյանքի, ստեղծագործ կամքի, հաղթանակի և ապրելու ու հավերժելու հավատքի:

Ապրիլյան եղեռնի մեր նահատակներն ընկան «ապագայի ճամբուն վրա, որպեսզի ողջերը կարենային շարունակել զայն: Վասընզի ողջերը չեն ապրիր, երբ մեռելներուն երազը մեռնի»...

Համազգային ուխտի, աղոթքի, ոգեկոչման օր է այսօր ողջ հայության համար:

1976. ապրիլ 24. շաբաթ, Էջմիածին. Մայր տաճար:

Ժամը 12-ն է:

Նահատակաց ս. սեղանի վրա պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և իր բովանդակալից քարոզում ոգեկոչում խնկելի հիշատակը մեր նահատակների:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմով, մայրավանքի ողջ պաշտոնեությամբ:

Մայր տաճարը և վանքի շրջափակը լիքն են ուխտավոր բազմությամբ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափորի, առաջնորդվում է մայրավանքի հյուսիսային մասում կառուցված **Ուխտի և Աղոթքի** նահատակաց հուշարձան և նախագահում հոգեհանգստյան արարողությանը:

Նահատակաց հուշարձանը ծածկվել է թարմ ծաղիկներով:

Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում մեր նահատակաց հիշատակին: Բոլոր ներկաները մեկ րոպե հպարտ լռությամբ, երախտապարտ հիշողության լույսով հարգում են Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակը:

Ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ծաղիկներով, ողջ հանրապետության բազմահազար ժողովրդի հետ, բարձրանում են Ծիծեռնակաբերդ և իրենց գլուխները խոնարհում նահատակների անմոռաց հիշատակի առաջ:

Փա՜ռք և հարգա՜նք քեզ, երեկ նահատակված, բայց այսօր հրաշափառապես հարություն առած հայ ժողովուրդ և Հայո՛ց աշխարհ: